ԽՆՈՒՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ԵՎ ՁԱՐԴԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

1915թ. Խնուս գավառի ինքնապաշտպանությունը, չկրեց ընդհանուր բնույթ, սակայն այստեղ առանձին գյուղեր փորձեցին ամեն կերպ դիմակայել ջարդարարներին: Այդ մասնակի կռիվները հայ ազատագրական պայքարի հերոսական էջերից էին:

Խնուսի տարագրությունն ու ջարդը, ինչպես և Արևմտյան Հայաստանի մյուս գավառներում և Կիլիկիայում, տեղի ունեցավ թուրք պետական պաշտոնյաների գիտությամբ ու հրահանգով:

Խնուսում հայերի ջարդի ղեկավարներն էին՝ գայմագամ Թահիր բեյը, բիթլիսցի Ալի աղան, Հաճի Իսաֆ էֆենդին, Սահմուդ աղայի տղան՝ Շուքրին և էլի մի քանիսը: Ջարդարարներն էին՝ քուրդ համիդիե հեծելազորը, չեթեներն ու քուրդ խուժանը: Սրանց պակաս թողածը լրացրեցին ժանդարմները՝ հիսնապետ Օսման չաուշի գլխավորությամբ (1,269):

1914թ. հուլիսին թուրք կառավարությունը «*սեֆեր պերլիկ*» հռչակեց և սկսեց ընդհանուր զորահավաքը(1,269): Զորահավաքի ենթարկվեցին նաև Խնուսի քուրդ աշիրեթներից: Զորակոչված քրդերը համալրեցին համիդիե գնդերի հեծելազորն ու հետևակը: Սրանց հետագայում տեղակայեցին Խնուս Բերդում և Ղարաչոբան, Գովանդուկ, Հարամիկ ու Չավուրմե գյուղավաններում, որտեղի հայ բնակչությունը կառավարության կողմից պարտավորվեց պարենավորել վերջիններիս: Սակայն կարճ ժամանակ անց այս գնդերը փոխադրվեցին Կարին-Բասեն-Ալաշկերտ ռազմաճակատը (1,270):

Համիդիե գնդերի պատճառած հարստահարությունից զատ կար նաև «*Թեքելիֆի հարպիե*» պատերազմից հարկադրված պետական պարտադիր փոխառությունը, որը խստորեն կիրառվում էր հատկապես հայերի վրա. պետական բոլոր տուրքերից բացի, ռազմաճակատ ուղարկելու նպատակով, հայերից պարտադրմամբ վերցնում էին եզ, կով, ոչխար, էշ, գոմէշ, ցորեն, գարի, խոտ, հարդ, գետնախնձոր, կաղամբ, գուլպա, թաքնոց, անկողին, սփռոց, անգամ ծեթ ու ծեթի ճրագ: Սրանց փոխարեն հարկահավաքը հասարակ մի թղթի կտոր էր տալիս(1,271):

Դեկտեմբեր ամսին կազմվեցին «*Ամիլիե թաբուր*» բեռնակիր գնդերը: Այս գնդերի մեջ բռնությամբ ներառվեցին նաև հայ կանայք, որոնք բեռները շալակելով՝ տանում էին Կարին, Բասեն և Ալաշկերտ: Նրանցից շատերը ցրտի, սովի և համաճարակի զոհ դարձան (1,271):

1914թ. աշնանը Խնուսի հայոց վիճակն էլ վատթարացավ. Չխուրցի Մուսա բեյն իր 20000-անոց հրոսակախմբով Բասենի ճակատ գնալու նպատակով, Բուլանուխի վրայով մտավ Խնուս: Խնուսի հայկական բնակավայրերը ավարի ու թալանի ենթարկելուց հետո, նա իր 700 հեծյալներով գնաց և մեկ շաբաթով հաստատվեց Հարամիկ գյուղում(1,272):

Այս ժամանակներում հայերի գլխին որպես հավելյալ պատուհաս՝ Խնուս լցվեցին նաև ռուսական ռազմաճակատում պարտություն կրած և փախուստի դիմած քրդերը:

Ռուս-թուրքական պատերազմի օրերին Խնուսի հայերի մեջ իշխում էր հոգեբանական այն համոզմունքը, թե ռուսները շուտով կգրավեն Խնուսը: Այդ իսկ պատճառով տեղի հայերը լուրջ ապստամբության և ինքնապաշտպանության չպատրաստվեցին: Այնուամենայնիվ, որոշակի պատրաստություններ նկատվեցին մի քանի գյուղերում, այն էլ՝ մարտ-ապրիլ ամիսներին, երբ ռուսական առաջխաղացումն այլևս կանգ էր առել և կառավարության դրդումով քրդական ճնշումները հայերի վրա էլ ավելի էին շեշտակի դարձել(1,274):

1915թ. ապրիլին ծանրագույն կացության մեջ հայտնված հայերը գյուղերի երևելիներից մի պատվիրակություն կազմած, տիրող անհանդուրժելի վիճակից ելք գտնելու դիտավորությամբ, գնում են Խնուս Բերդ՝ իշխանություններին դիմելու: Բերդում սրանց են միանում նաև տեղի ակնավոր հայերը: Իշխանություններն օգտվելով հարմար այս առիթից, հանկարծակի բերելով, ծերբակալվում են բոլորին թվով մոտ 150 հոգի, որոնք 4 օրվա բանտարկությունից հետո, չեթեների ու ժանդարմների հսկողությամբ, իբր տարվում են Կարին: Սակայն Դերջանի և Երզնկայի միջև, Սանսարդարա կոչվող ձորում բոլորը կոտորվում են(1,273-274):

Դա ջարդն սկսելու ազդանշանն էր:

Ռազմավարական հատուկ նկատառումներից ելնելով, համիդեական գնդերն ու խուժանն իրենց հարձակումները սկսեցին գավառի արևելյան կողմից, որպեսզի կտրեն հայերի գաղթը դեպի արևելք, որտեղ տեղակայված էին ռուսների դիրքերը:

Հարձակումը սկսում են մայիսի 1-ին Գովանդուկ և Սալուորի ուղղություններով:

Գովանդուկ գյուղը գտնվում է Խնուս գետից ոչ հեռու՝ գեղատեսիլ մի դիրքի վրա: Նրա և Բուռնազ գյուղի սահմանների հարթավայրի ստորոտով անցնում էր ստորգետնյա մի գետ: Այս գետի ջուրը տեղ-տեղ հայտնվում էր, սակայն առանց հորդելու և հուներից զատվելու գնում թափվում էր Արածանի գետը:

Գովանդուկը բաղկացած է եղել 120 տուն հայերից(1,48): Կան նաև այլ տեղեկություններ: Մ. Միրախորյանը նշում է, որ Գովանդուկն ունեցել է 90 տուն հայ բնակչություն(2,160), ըստ Հ. Էփրիկյանի 80(3,52), ըստ Ա-Դոյի՝ 120(4,185), ըստ արխիվային փաստաթղթերի՝ 80 տուն, 1003 շունչ հայ բնակչություն(5):

1915թ. մայիսի 1-ին Գովանդուկ գյուղ են գալիս քուրդ համիդիեները գլխավորությամբ Խալիլ բեյի, Սատի աղայի ու նրա զավակների: Նրանք իբրև հյուր իջևանում են հայոց տներում: Սակայն հանկարծակի բերելով հյուրընկալներին՝ սկսում են ջարդի և ավարի ենթարկել գյուղը: Կարճ ժամանակ անց սրանց օգնության է հասնում գյուղի մերձակայքում գտնվող քուրդ խուժանը:

Հայ գյուղացիներից կազմված զինյալ մի խումբ, ղեկավարությամբ գյուղի ռես Միհերի որդու՝ դաշնակցական Դավթի, Մալխասյան Համազասպի և Հնչակյան Ալեքսանդրի, իրենց ձեռքն են առնում Գովանդուկի պաշտպանությունը: Հայ զինյալները դիրքեր գրավելով, օրհասական պայքար են մղում համիդիեների և խուժանի դեմ: Այստեղ Միհերի Դավթի գնդակից տապալվում է այդ օրերի մեծ հայահալածներից մեկը Խալիլ բեյը, որը քուրդ ջարդարարների մեջ համիդիե պարագլուխներից էր: Խալիլ բեյի մահը խուճապ է գցում քուրդ զինյալների շարքերում և նրանք սկսում են նահանջել Գովանդուկի սահմաններից դուրս:

Քրդերի նահանջի առիթից օգտվելով՝ զինյալ հայերի պաշտպանությամբ, անգեն ժողովուրդը սկսում է նահանջել դեպի հարևան գյուղավանը՝ Ղարաչոբան:

Քրդերը տեսնելով, որ գյուղը սկսում է դատարկվել՝ նորից անցնում են հարձակման:

Կատաղի պայքար է վերսկսում: Քրդերը գրավում են գյուղի մի մասը:

Կռիվը շարունակվում է մինչև երեկո: Մութն ընկնելուն պես հայ զինյալները թողում են գյուղը և բարձրանում մոտակա Գոզալբաբա սարը: Այնուհետև բոլոր նրանք ովքեր չէին հասցրել լքել Գովանդուկը՝ ենթարկվում են կոտորածի: Վերջապես գյուղն ամբողջությամբ թալանվում է (1,275)...

Գովանդուկցի Քարամ Միհրյանի անտիպ հուշերում կարդում ենք. «1915թ. մայիսի 20-ին... ես անասուններին տարել էի դաշտ արածացնելու, իսկ ինքս խաղում էի գետի մոտ: Այդ լուրը ինձ բերեց հորեղբորս տղան, նա գոռալով ասաց. «Քարամ, անասուններին քշի-բեր, քրդերի զինվորները գալիս են»...

...Գյուղում քրդերի դեմ կռվողների մեջ էին հայրս (Դավիթը), հորաքրոջս տղան Համազասպը, Գալուստը, Միսակը, Ավոն: ... Ես թողի անասուններին և փախա գյուղ գնդակների կրակոցների տակ: Գյուղի մոտ հայրս հասավ ինձ, բռնեց ձեռքիցս և մտանք գյուղ: Գյուղի ժողովուրդը փախել էր դեպի Ղարաչոբան գյուղը: Քրդերը հարյուրներով էին գալիս: Ես էլ հորս հետ դուրս

եկա գյուղից: Խալիլ աղան իր ձին քշեց հորս վրա քրդերեն գոռալով. «Դավին թասլին եղիր քեզի – կսպանեմ»: Հայրս կրակեց Խալիլի վրա նա ընկավ ձիուց անշնչացած: Սայիդն ու Սադին տեսան Խալիլի դիակը, մոտեցան, վերցրին այն, դրին ձիու վրա ու տարան: Այդ օրը կռիվ չեղավ»(6)...

Նույն օրը Համիդ բեյի հրամանատարությամբ համիդիե մի հեծելագունդ շրջանի քրդական գյուղերից ժամանած խուժանի օժանդակությամբ հարձակվում են Սալուրի գյուղի վրա: Հաջորդ օրը մայիսի 2-ին նույն գունդը հարձակման է ենթարկում նաև Խրմխայա գյուղը: Այս երկու գյուղերում էլ Համիդ բեյը հայերի զինված դիմադրության է հանդիպում, որի արդյունքում անզեն ժողովրդի չնչին մնացորդներ հասցնում են փախչել Ղարաչոբան: Խրմխայացի զինյալները բարձրանում են Գոգալբաբա և միանում գովանդուկցի քաջերին (1,275): Այնուհետև այս երկու գյուղերն էլ ենթարկվում են ջարդի ու թալանի... -

Քրդերի հաջորդ նպատակակետը Ղարաչոբանն էր գավառի ամենամեծ գյուղավանը: Գովանդուկ, Սալուրի և Խրմխայա գյուղերը ոչնչացնելով Ղարաչոբանն ամբողջապես մեկուսացվել էր, ուստի այս ուղղության վրա մեծ ուժեր կենտրոնացնելով համիդիե գնդերն ու խուժանը մայիսի 2-ին պաշարեցին այն:

Ղարաչոբանը գտնվում է ընդարձակ մի բլրադաշտի վրա, Խնուս գետի ափին: Սահմաններն ընգծվում էին Սպիտակ սարի, Գոբալա-Գետուկի, Գոգալբաբա և Հազրբաբա լեռներով:

Հաստատված էր հեռագրատունն ու նամակատունը: Ղարաչոբան գյուղն ուներ 220 տուն բնակչություն(1,48): Այսպիսի տաղեկություն է մեզ հայտնում նաև Բնակչության թվաքանակի մասին կան նաև հետևյալ տվյալները. Մ. Միրախորյանը հաշվում էր 150 տուն(2,160), Հ. Էփրիկյանը 1903թ. 136(3,52): Ըստ Կարինի առաջնորդարանի վիճակագրության, 1895թ. գյուղն ունեցել է 220 տուն, որից 170-ը հայեր էին(4,185):

Ղարաչոբանը «*նահիե մյուդուրլիք*» էր, այսինքն մյուդիրի նստավայր: Ուստի այստեղ ջարդի դեկը ստանձնել էր մյուդիրը Մուստաֆան: Սրան աջակցության էր եկել գավառի ոստիկանության մի վաշտ հիսնապետ Օսման չաուշի (հետագայում վայրագ մի ջարդարար) ղեկավարությամբ: Մյուդիրին իրենց աջակցության ձեռքն էին մեկնել նաև հեռագրատան պաշտոնյաները և օրեր առաջ գյուղ հրավիրված, Լաքբուդաղ գյուղի չեթեները գլխավորությամբ Մոռոյի ու Սևթինի(1,276):

Շրջակա գյուղերի դեպքերը որպես պատրվակ ընտրելով մյուդիրն իր մոտ է կանչում հայ համայնքի երևելիներից մի քանիսին, որոնցից էին Հազրոյի որդիքը Իսրայելը (գյուղի նախկին մյուդիրը), Գասպարը, Կիրակոսը և Զաքարյան եղիշեն: Վերջիններիս մյուդիրը հորդորում է, որ համոզեն հայերին ցած դնել զենքը, և որ որոշակի կաշառքի դիմաց բոլորը կստանան իր հովանա-

վորությունը: Հակառակ դեպքում, սպառնում է, որ բոլորը կհայտնվեն այն դրության մեջ, ինչպիսին այն գյուղերն էին, որոնք դիմադրություն էին ցուցաբերել: Հայերին դեպի զինաթափություն հորդորելուց զուգընթաց, մյուդիրը հրամայում է համիդիեներին պաշարել գյուղն ու անցնել հարձակման(1,276):

Մյուդիրի նյութած դավը նկատելով, Զաքարյան եղիշեն փախնում գալիս է հայ զինյալների մոտ: Այստեղ գյուղի պաշտպանության ղեկավարությունը ստանձնել էր Տերտիրոջ Սիմոնը, նրան աջակցում էին Համազասպը, Շապուն, Պուտաղի Տիգրանը և ուրիշներ(1,276):

Հարձակումը տեղի ունեցավ կեսօրին: Կատաղի կռիվ սկսեց: Առաջին հաղթանակն արձանագրվեց հայերի օգտին:

Պարտված համիդիեներն ու քուրդ խուժանը 59 սպանված թողնելով մարտի դաշտում, դիմեցին նահանջի: Այս իրողությունից ցնցված մյուդիրն ու հիսնապետ Օսման չաուշը, տեղնուտեղը սպանում են Հազրո Իսրայելին ու նրա եղբայրներին, ինչպես նաև իրենց մոտ ապաստանած բոլոր անզեն հայերին, իսկ չեթեն Մոռոյին ու Սնտինին հրամայում են ջարդել բոլոր հայերին(1,276):

Կռիվը վերսկսում է: Թեպետ քրդերն ամեն կերպ ջանում էին ձեռք գցել անզեն ժողովրդին, սակայն հայ զինյալներին հաջողվեց դիմակայելով հակառակորդի կատաղի գրոհներին ապահովել ժողովրդի նահանջը դեպի Գոզալբաբա (1,276):

Մայիսի 3-ին Խնուսի ծայրագավառի գյուղերից Գոբալի վրա հարձակումն իրականացրեց Խլբաշի Խալիլն, իր ձիավորներով: Սրանց առջև դիմադրության ելած հայերի ղեկավարներն էին Կարապետի տղա Մովսեսը և Տեր Ավատիսի երկու որդիները՝ Միսակն ու Սեթրակը: Անզեն ժողովրդի մի մասին հաջողվում է փախչել Աճմու տղաների՝ Բաբայի և Ռաշիդի գյուղերը, իսկ զինված խումբը կռվելով բարձրանում է Գոզալբաբա լեռը և միանում Գովանդուկի ու Ղարաչոբանի զինյալներին, որոնք մոտեցել էին Գոբալի մատույցներին(1,277):

Գոբալից Տոբախան և Քեշիշան գյուղերի վրայով անցնելիս՝ վերջիններս հանդիպում են Խալիլ բեյի համիդիեներին և կռվի բռնվում նրանց հետ: Մեծ ջանքերով հայ զինյալներին հաջողվում է դիմակայել հակառակորդի գրոհներին և անցնելով ռուսական գիծը, նրանք միանում են հայ կամավորական խմբերին:

Այս կռվում սպանվում է Գովանդուկի ռես Սիերի որդին՝ Դավիթը (հին հեղափոխական, և 101 տարվա ազատազրկման վճիռով Կարինում բանտարկված, այնուհետև 1908թ. սահմանադրությամբ ազատ արձակված) (1,276):

Հետագա օրերին ջարդի ու նախիրճի են ենթարկվում նաև Խնուս գավառի մյուս գյուղերը:

Մայիսի 4-ին Գարաքյոփրու գյուղի վրա հարձակվում են Իկիթի Յուսուֆ աղան և Խալլոթ բեյը իրենց ձիավորներով (1,276): Նույն օրը հարձակում է լինում Դուման Մարուֆ, Շաբադին գյուղերի վրա: Հարձակումն իրականացնում են Շահո Խալոյի որդիները Թաժտոն, Համզոն և եղբայրը Մոստկոն ու Ալին (1,278):

Մայիսի 5-ին Աղջամելիք գյուղը պաշարվում է հասանցի աշիրեթի քրդերի կողմից: Այստեղ գրեթե բոլոր հայերը կոտորվում են (1,278): Նույն օրը Բուռնազ գյուղում հայերի հանդեպ նախիրճն իրականացնում է հասանցի աշիրեթությունից Աբդուլ Մեջիթը(1,278):

Մայիսի 6-ին ջարդվում են Խաթ, Ենիքոյ, Եղրդլու, Գասպարի գեղ գյուղերը(1,279): Նույն օրը Խոզլու գյուղի վրա հարձակվում է Յուսուֆ աղայի որդիքը՝ Ֆեզլին ու Մոռոն՝ իրենց հեծյալներով(1,279):

Նույն օրը Քաղքիկ գյուղը ջարդի է ենթարկվում Ջիբրանցի քուրդ աշիրեթապետերի կողմից՝ ղեկավարությամբ Սելիմ բեյի և Սատի աղայի: Զարմանալիորեն Քաղքիկը, ինչպես նաև Խաչալույսը ոչ մի դիմադրություն ցույց չտվեցին, չնայած որ երկուսն էլ հայտնի էին իրենց հեղափոխական փորձառու հայդուկներով(1,280): Այս օրը ջարդվեց Ելփիսը՝ գյուղի աղա Շուքրիի ձեռով (1,280):

Մայիսի 7-ին Խաչալույսը ջարդվեց գյուղի աղա Սաքիի և մյուդիրի Մուստաֆայի ձեռով(1,281): Նույն օրը ջարդվեցին նաև Չավուրմե և Գաբրիելի գոմ գյուղերը(1,283):

Մայիսի 8-ին Արոս գյուղի վրա հարձակվում են քուրդ համիդիեներն ու չեթեները(1,283):

Մայիսի 9-ին հարձակում է տեղի ունենում Սարլու գյուղի վրա(1,283): Նույն օրը Յահյա գյուղը ջարդվում է Խուլի Խան բեկի գլխավորած համիդիեների կողմից(1,283): Այս օրը հարձակում է տեղի է ունենում նաև Հարամիկ գյուղավանի վրա(1,285-296):

Շուրջ 10 օր տևած կռիվներից հետո գավառի հայաբնակ բոլոր գյուղերը մնում են անհայ: Խնուսում, լուրջ ինքնապաշտպանական կռիվներ են տալիս Գովանդուկ և Ղարաչոբան գյուղերը, ինչպես նաև Խըրմխայան, Սալորին և Գոբալը, որտեղ զինյալ խմբերի պաշտպանության ներքո անզեն ժողովուրդը հասցնում է փրկվել: Ինքնապաշտպանության առանձին գործողություններ թեպետ տեղի են ունենում մի քանի գյուղերում ևս (Խոզլու, Ելփիս, Խաչալույս, Արոս և Հարամիկ), սակայն դժբախտաբար դրանց արդյունքում քչերին է հաջողվում փրկվել:

Մայիսի 10-ին, համիդիեներն ու քուրդ խուժանը Խնուսի դաշտի հայկական գյուղերը ամբողջապես ջարդելուց ու թալանելուց հետո վերջին

անգամ փորձ են անում հարձակվել Խնուս բերդաքաղաքի վրա: Սակայն կառավարության պաշտոնյաները և քաղաքի բեյերն ու աղաները, Բերդի հայց ստացվածքը համիդեականներին և քուրդ խուժանին կեր չընկնելու միակ մտահոգությունից դրդված արգելում են նրանց քաղաք մտնել(1,296):

Այսուհետև, կառավարությունն ինքն էր կողոպտում հայերի ինչքը: Եվ վերջնականապես հայերին հարստահարելուց հետո, սկսում է կազմակերպել տեղահանությունը: Տեղահանությունը բացատրելու համար մուսետիկ է կանչել տալիս հայտարարելով, որ հրաման կա, թե ապահովության համար հայերը պիտի ուղղարկվեն *Վերան Շահիր* և, թե ժանդարմները նրանց ճամփին պիտի պաշտպանեն: Սակայն, երբ կարավանը հասնում է Վարդոյի շրջանը, քրդական Բազկան և չերքեզական Չարպուհոր գյուղերի սահմանների վրա, *Շոռ ու Շաթ* կոչվող կիրճում, Արածանի գետի ափին, հարձակման են ենթարկվում այդ շրջանի քրդերի կողմից, որոնք և կարավանին ընկերակցող ժանդարմների ու չեթեների հետ միասին, սոսկալի կերպով կոտորում են բոլոր հայերին(1,297):

Բերդի բնակչության տեղահանությամբ, օսմանցու յաթաղանը Խնուս գավառի հայկական բնաջնջումը ամբողջական է դարձնում ավերակ ու ամայի թողնելով, դարերով շեն ու պայծառ *Եդեմի Այգին*:

XVIII - XIX դդ. գրեթե զուտ հայաբնակ Խնուսի բնակավայրերի զգալի մասը թեև XX դ. սկզբին գրկվել էր բնիկներից, սակայն 1914 թ. հայերը շարունակում էին կազմել տեղի բնակչության շուրջ 50% -ը (ավելի քան 26 հազ. մարդ, ամենամեծ էթնիկական տարրը): Հայաբնակ էին ինչպես գավառակենտրոնը՝ Խնուս բերդաքաղաքը, այնպես էլ՝ գավառի ամենաբազմամարդ ավանները ու գյուղերը: Քրդերով զբաղեցված բնակավայրերի հիմնական՝ մասը հատուկենտ ընտանիքներ պարունակող ագարակ-մեզրեներ էին կամ գոմեր(7):

Խնուսի 25000 հայությունից ջարդերից փրկվում են միայն մի քանի հազարը (3000-ը), որոնցից հարյուրավոր երիտասարդներ ռուսների գրաված գոտին մտնելով, որպես մարտիկներ, անմիջապես միանում են հայ կամավորական խմբերին(1,298):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Տես Ե. Մելիքյան, Հարք-Խնուս, Բեյրութ, 1964, էջ 269:
2. Տես Մ. Միրախորյան, Նկարագրական ուղեորութիւն ի հայաբնակ Գաւառս Արևելյան Տաճկաստանի, հ. Ա,մ. 3, Պոլիս, 1885, էջ 160:
3. Տես Հ. Էփրիկյան,Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, այր. 1, Վենետիկ, 1990, էջ 52:
4. Տես Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 185:
5. Տես ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 233, թ.112:
6. Տես Քարամ Մեհրյանի հուշերը, անտիպ, (հեղինակի անձնական արխիվից):
7. Տես Խնուս գավառի քարտեզը, հեղ. Գ. Բաղդասյան: